

ՄԱՍ 4. ՀԱՅԱՍՏԱՆ.  
ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ  
ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ 2011թ.-ին

## Գլուխ 12. Աղքատության և կենսամակարդակի վերաբերյալ սուբյեկտիվ գնահատականները

Աղքատությունը բազմաբնույթ է և այն կարող է չափվել և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ մոտեցումներով: Հայաստանում մեկ չափահասին համարժեք սպառման ազդեգատի հիման վրա հաշվարկված կենսամակարդակի օբյեկտիվ գնահատականի (35.0%) համեմատ, սուբյեկտիվ գնահատականներն (իրենց բարեկեցության վերաբերյալ անհատների անձնական տեսակետներն) ավելի ցածր են (15.4%) :

Իրենց ծայրահեղ աղքատ են համարել միայն 2.1%-ը՝ 3.7% մեկ չափահասին համարժեք սպառման ցուցանիշով գնահատված ծայրահեղ աղքատության մակարդակի համեմատ: 2008թ.-ի համեմատ 2011թ.-ին աղքատության մակարդակի վերաբերյալ սուբյեկտիվ գնահատականներն ավելի ցածր են (2011թ.-ին 15.4 %-ը 2008թ.-ի 17.0%-ի համեմատ):

### 12.1. Բնակչության կարծիքն իր կենսամակարդակի վերաբերյալ

2011թ.-ի հետազոտության ընթացքում տնային տնտեսությունների 16 և բարձր տարիքի առկա անդամներին տրվել են մի շարք հարցեր, որոնց հիման վրա գնահատվել են կենսամակարդակի առաջնային խնդիրները:

**Աղյուսակ 12.1. Հայաստան. Տնային տնտեսությունների անդամների համար առավել առաջնային խնդիրները, 2011թ.**

<b>Առաջնային խնդիրները</b>	<b>2011թ.</b>
Մանրի ապահովման խնդիր	15
Ոչ պարենային առաջնային կարիքներ	33
Բնակարանային հիմնահարց	22
Երեխաներին բավարար կրթությամբ ապահովելու խնդիր	2
Առողջության խնդիր	6
Այլ	22

*Աղբյուրը. SSՀԱՀ 2011թ.*

2011թ.-ին սննդի ապահովման հարցը հիմնական խնդիր համարող տնային տնտեսությունների անդամների մասնաբաժինը կազմել է 15%: Բնակչության 33%-ի գնահատմամբ ոչ պարենային կարիքներից բավարարվածությունը համարվում է կարևոր հիմնախնդիր: Գրեթե ամեն չորրորդի (22%) համար 2011թ.-ին ամենակարևորը բնակարանային հիմնահարցն է: Տնային տնտեսությունների 6%-ի համար ամենաառաջնային խնդիրը առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորությունից զուրկ լինելն է: Հարցվողների 2%-ը նշել է երեխաներին բավարար կրթությամբ ապահովելու անկարողությունը, իսկ 22%-ը նշել է այլ առաջնային խնդիրներ:

2008-2011թթ.-ին կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականը փոփոխվել է հետևյալ կերպ.

**Աղյուսակ 12.2 Հայաստան. Կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականը,  
2008-2011թթ.**

*(տոկոսներով)*

	Կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականը					
	ծայրահեղ աղքատ	աղքատ	միջինից ցածր	միջին	միջինից բարձր	հարուստ
2008թ.	2.3	14.7	35.6	43.0	4.2	0.2
2009թ.	2.9	15.0	37.3	41.3	3.4	0.1
2010թ.	2.2	12.4	38.8	42.2	4.0	0.4
2011թ.	2.1	13.3	38.2	43.2	3.1	0.1

Աղբյուրը. *SSYUՀ 2008-2011թթ.*

Ըստ կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականի 2011թ.-ին **աղքատ` ներառյալ ծայրահեղ աղքատ են իրենց համարել բնակչության 15.4%-ը** (2008թ.-ի 17.0%-ի համեմատ): Ըստ հարցվածների ինքնագնահատման` 2011թ.-ին.

- միջին կենսամակարդակ ունեցել են հարցվածների 43.2%-ը` 2008թ.-ի 43.0%-ի համեմատ,
- 38.2%-ի կարծիքով իրենց կենսամակարդակը միջինից ցածր է` 2008թ.-ի 35.6%-ի դիմաց,
- իրենց հարուստ են համարել հարցված բնակչության 0.1%-ը, իսկ 2008թ.-ին իրենց այդպես են գնահատել հարցվածների 0.2%-ը,
- 3.1%-ը գտել է, որ ունի միջինից բարձր կենսամակարդակ, 2008թ.-ի 4.2%-ի նկատմամբ:

Այսպիսով, 2011թ.-ին 2008թ.-ի համեմատ սուբյեկտիվ գնահատականներում էական փոփոխություններ չեն կատարվել, բացի իրենց կենսամակարդակը միջինից ցածր գնահատող հարցվածներից:

Թե որքանով են համընկնում կենսամակարդակի սուբյեկտիվ և օբյեկտիվ գնահատականները, երևում է ստորև ներկայացված աղյուսակից, որտեղ տնային տնտեսությունների անդամները բաշխվել են ըստ սեփական կենսամակարդակին տրված իրենց իսկ գնահատականների և ըստ յուրաքանչյուր տնային տնտեսության անդամների համար հաշվարկված մեկ չափահասին համարժեք սպառման ագրեգատի, ինչին համապատասխան նրանք բաշխվել են` ըստ աղքատության մակարդակի:

Ինչպես երևում է ստորև բերված աղյուսակից, ըստ օբյեկտիվ գնահատականի առաջին (ամենաաղքատ) սպառման դեցիլային խմբի բնակչության 34.5%-ի կարծիքը համընկել է սեփական կենսամակարդակին (ծայրահեղ աղքատ և աղքատ) տրված իրենց իսկ գնահատականներին: Իսկ տասներորդ (ամենահարուստ) սպառման դեցիլային խմբի բնակչության միայն 7.2%-ի կարծիքն է համընկել սեփական (միջինից բարձր և հարուստ) գնահատականներին:

**Աղյուսակ 12.3. Հայաստան. Կենսամակարդակի սուբյեկտիվ և օբյեկտիվ ( ըստ սպառման ագրեգատի դեցիլային խմբերի ) գնահատականները**  
(%-ով՝ յուրաքանչյուր դեցիլային խմբի մեջ), 2011թ.

(տոկոսներով)

Սպառման ագրեգատի դեցիլային խմբեր(օբյեկտիվ գնահատական)	Կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականը					
	ծայրահեղ աղքատ	աղքատ	միջինից ցածր	միջին	միջինից բարձր	հարուստ
Ընդամենը այդ թվում՝	2.1	13.3	38.2	43.2	3.1	0.1
Առաջին դեցիլ	7.1	27.4	34.0	30.8	0.7	0.0
II	5.5	19.2	40.6	32.3	2.4	0.0
III	2.6	12.1	42.6	39.9	2.8	0.0
IV	3.1	16.9	37.6	40.9	1.5	0.0
V	0.8	12.9	44.1	40.1	2.1	0.0
VI	0.7	14.3	37.1	45.6	2.3	0.0
VII	0.7	11.3	39.4	45.1	3.5	0.0
VIII	0.9	8.2	40.1	48.6	2.2	0.0
IX	1.0	7.6	34.5	50.6	5.6	0.7
Տասներորդ դեցիլ	0.5	6.5	32.0	53.8	7.2	0.0

Աղբյուրը. SSYUL 2011թ.


Նշում. Սպառումը հաշվարկվել է ըստ մեկ չափահասի սպառմանը համարժեք:

Զնայած արդյունքները հիմնականում համընկնում են, սակայն աղքատության օբյեկտիվ գնահատականն ավելի ցածր է, քան սուբյեկտիվը: Բնակչության միայն 2.1 տոկոսն է իրեն գնահատել շատ աղքատ, մինչդեռ մեկ չափահաս անձին համարժեք սպառման հիման վրա գնահատված աղքատության ցուցանիշով, ծայրահեղ աղքատ է գնահատվել բնակչության 3.7 տոկոսը: Նմանապես, իրեն աղքատ է համարել (չհաշված ծայրահեղ աղքատներին) բնակչության 13.3 տոկոսը, մինչդեռ մեկ չափահաս անձին համարժեք սպառման հիման վրա աղքատ է գնահատվել նույն մոտեցումով բնակչության 31.3 տոկոսը: Այդ իսկ պատճառով, 2011թ.-ին՝ ըստ ինքնագնահատման աղքատության ընդհանուր մակարդակը կազմել է 15.4 տոկոս, իսկ մեկ չափահաս անձին համարժեք սպառման հիման վրա ընդհանուր աղքատության ցուցանիշը գնահատվել է 35.0 տոկոս: Հետաքրքիրն այն է, որ իրենց կենսամակարդակը միջինից բարձր գնահատած տնային տնտեսությունները կազմել են 3.1 տոկոս, և գրեթե ոչ մի տնային տնտեսություն (0.1%) իրեն հարուստ չի համարել:

Գծապատկեր 12.1-ում հետազոտված տնային տնտեսությունները բաշխվել են ըստ իրենց կենսամակարդակին տրված գնահատականների և ըստ մեկ չափահաս անձին համարժեք սպառման հիման վրա գնահատված աղքատության մակարդակի: Այսպես, մեկ չափահաս անձին համարժեք սպառման հիման վրա ոչ աղքատ գնահատված տնային տնտեսությունների 1.0 տոկոսն իրեն գնահատել է որպես ծայրահեղ աղքատ, սպառման ագրեգատի հիման վրա աղքատ գնահատված տնային տնտեսությունների 4.3 տոկոսը կարծում է, որ ինքը ծայրահեղ աղքատ է: Իրեն ծայրահեղ աղքատ է համարել սպառման ագրեգատով ծայրահեղ աղքատ գնահատվածների 5.8 տոկոսը: Սպառման ագրեգատով ծայրահեղ աղքատ գնահատվածները հետևյալ գնահատականներն են տվել իրենց սոցիալ-տնտեսական վիճակին՝ 5.8 տոկոսն իրեն համարել է ծայրահեղ աղքատ, 34.9 տոկոսը՝ աղքատ, 32.1 տոկոսը՝ միջինից ցածր, 27.3 տոկոսը՝ միջին և ոչ մի տնային տնտեսություն չի գնահատել իր կենսամակարդակը միջինից բարձր կամ հարուստ:

**Գծապատկեր 12.1. Հայաստան. Կենսամակարդակի սուբյեկտիվ և օբյեկտիվ գնահատականները, 2011թ.**

(տոկոսներով)



Աղբյուրը. SSԿԱՀ 2011թ.

Հարցման մասնակիցների պատասխաններն այն հարցին, թե ամսական մեկ շնչի հաշվով, որքան գումար է անհրաժեշտ լավ և շատ լավ ապրելու կամ գոյատևելու համար, ըստ 2008 և 2011թթ. հետազոտությունների արդյունքների, բերվում են ստորև:

**Աղյուսակ 12.4. Հայաստան. Տնային տնտեսությունների տեսակետն ապրելու համար անհրաժեշտ մեկ շնչի հաշվով միջին ամսական եկամտի չափի վերաբերյալ 2008 և 2011թթ.**

	ՀՀ դրամով		ԱՄՆ դոլարով	
	2008 թ.	2011 թ.	2008 թ.	2011 թ.
Շատ լավ ապրելու համար	853804	786122	2350	2110
Լավ ապրելու համար	191591	170947	527	459
Գոյատևելու համար	46847	80567	129	216

Աղբյուրը. SSԿԱՀ 2008 և 2011թթ.

Աղյուսակը ցույց է տալիս, որ 2008թ. համեմատ 2011թ.-ին գոյատևելու համար մեկ շնչի հաշվով ՀՀ դրամով անհրաժեշտ գումարն աճել է 37%-ով, իսկ նույն ժամանակահատվածում, տնային տնտեսությունների կարծիքով, լավ և շատ լավ ապրելու համար անհրաժեշտ գումարի չափը նվազել է:

2011թ. հետազոտության ընթացքում կենսամակարդակը բարձրացնելու ուղղությամբ ամենահաճախ պլաններից տնային տնտեսության 16 և բարձր տարիքի անդամներից նշել են հետևյալը՝ ինձանից ոչինչ կախված չէ, կառավարությունը պետք է ապահովի աշխատանք և լավ պայմաններ (30.6%) կամ պլաններ չունեն (28.5%): Հարցվածների 14.9%-ը նշել է, որ փնտրում է եկամտաբեր աշխատանք Հայաստանում, իսկ սեփական գործ ցանկանում է սկսել միայն 0.3%-ը:

Հարցվածների 32.7%-ի կարծիքով նոր սերունդն ավելի լավ կապրի, 29.4%-ը դժվարացել է պատասխանել այդ հարցին, իսկ 21.4%-ի կարծիքով նոր սերունդն ավելի վատ կապրի, մնացած 16.5%-ի կարծիքով՝ նրանք կապրեն նույն ձևով:

**12.2. Բավարարվածությունը մատուցվող վճարովի ծառայությունների որակից**

Հետազոտության ընթացքում պարզվել է հարցմանը մասնակցած տնային տնտեսությունների տեսակետը տարբեր հաստատությունների կողմից մատուցվող վճարովի ծառայությունների վիճակի վերաբերյալ: Աղյուսակ 12.5-ում ներկայացված է հարցման մասնակիցների բավարարվածությունը մատուցվող վճարովի ծառայություններից: Աղյուսակից երևում է, որ 2011թ.-ին տնային տնտեսությունները հիմնականում բավարարված են էլեկտրաէներգիայի մատակարարումից (97.8%-ը վկայել է այդ մասին): Բավարարվածության աստիճանը բարձր է նաև հասարակական տրանսպորտի աշխատանքից՝ 85.6%, հեռախոսային ծառայություններից՝ 79.4%, փոստի ծառայություններից՝ 78.6%, ջրամատակարարման ծառայությունից՝ 75.5%, աղբի հավաքումից՝ 75.1%, ջրահեռացման ծառայությունից՝ 72.3%: Տնային տնտեսությունների անբավարարվածության աստիճանն ամենաբարձրն է առողջապահական ծառայություններից, ջրամատակարարման և աղբահանման ծառայություններից: 2008թ.-ի համեմատ 2011թ.-ին տնային տնտեսությունների բավարարվածությունը մատուցվող վճարովի ծառայություններից աճել է:

**Աղյուսակ 12.5. Հայաստան. Բավարարվածությունը մատուցվող վճարովի ծառայություններից, 2008 և 2011թթ.**

*(տոկոսներով)*

Վճարովի ծառայությունների անվանումը	Բավարարված են		Բավարարված չեն		Դժվարացել են պատասխանել	
	2008թ.	2011թ.	2008թ.	2011թ.	2008թ.	2011թ.
Ջրամատակարարում	57.1	75.5	42.5	23.9	0.4	0.6
Ջրահեռացում	65.0	72.3	23.1	15.6	11.9	12.1
Աղբի հավաքում	54.1	75.1	42.4	18.1	3.5	6.8
Հեռախոս	74.2	79.4	13.5	8.2	12.3	12.4
Էլեկտրաէներգիայի մատակարարում	97.4	97.8	2.4	2.1	0.2	0.1
Փոստ	73.7	78.6	2.6	2.8	23.7	18.6
Բանկերի աշխատանք	61.4	69.7	2.4	3.2	36.2	27.1
Ոռոգում	18.2	21.6	20.9	13.4	60.9	65.0
Առողջապահություն	56.1	62.6	29.0	27.7	14.9	9.7
Կրթություն	62.2	56.2	15.5	15.6	22.3	28.2
Հասարակական տրանսպորտ	80.2	85.6	15.6	11.9	4.2	2.5


Աղբյուրը. 2008 և 2011թթ. ՏՏԿԱՀ

Այն հարցին, թե վերջին 12 ամիսների ընթացքում ինչպիսի փոփոխություններ են եղել վերը նշված ծառայությունների մատուցման մեջ, հարցմանը մասնակցած տնային տնտեսությունների որոշ մասը դրական տեղաշարժ է նկատել, այսպես, 11.1%-ից՝ (կոյուղի), որպես նվազագույն դրական տեղաշարժ, մինչև 23.5%՝ (հասարակական տրանսպորտ) որպես առավելագույն դրական տեղաշարժ:

Գծապատկերներ 12.2-ում և 12.3-ում ներկայացված են 2011թ.-ին ծառայությունների մատուցման մեջ դրական և բացասական փոփոխությունները:

**Գծապատկեր 12.2. Հայաստան. Ծառայությունների մատուցման մեջ հարցմանը մասնակցած տնային տնտեսությունների կողմից արձանագրված դրական փոփոխությունները, 2011թ.,**

(տոկոսներով)




Աղբյուրը. 2011թ. SSԿԱՀ

2011թ.-ին ծառայությունների մատուցման մեջ արձանագրված ամենադրական տեղաշարժերը տեղի են ունեցել հասարակական տրանսպորտի, աղբահանության, բանկերի և փոստի աշխատանքներում:

**Գծապատկեր 12.3. Հայաստան. Ծառայությունների մատուցման մեջ հարցմանը մասնակցած տնային տնտեսությունների կողմից արձանագրված բացասական փոփոխությունները, 2011թ.**

(տոկոսներով)



Աղբյուրը. 2011թ. SSԿԱՀ

Համաձայն 2011թ. ՏՏԿԱՀ արդյունքների, ծառայությունների մատուցման գործում արձանագրված ամենաբացասական տեղաշարժերը գրանցվել են առողջապահության (12.0%) և կրթության (9.7%) ոլորտներում (Գծապատկեր 12.3):

Ծառայությունների որակի վատացման դեպքում, ոչ միշտ են հարցմանը մասնակցած տնային տնտեսությունները դիմել համապատասխան ծառայությունների ղեկավարությանը: Աղյուսակ 12.6-ում ներկայացված են ծառայությունների որակի վատացում արձանագրած բնակչության ձեռնարկած քայլերը և ստացված արդյունքները: Ինչպես երևում է աղյուսակից, բնակչությունը բավական հազվադեպ է դիմում մատուցվող ծառայությունների որակի բարելավման հայցով:

Բացի քանակական տվյալներից շատ կարևոր են որակական տվյալները: Այսպես օրինակ, չնայած խմելու ջրի մատակարարման բողոքներին, ղեկավարության կողմից միայն 25%-ի դեպքում է նախաձեռնություն ցուցաբերվել շտկելու դրությունը, ընթացք է տրվել՝ առողջապահական ծառայությունների մատուցման վատ աշխատանքի դեպքում դիմումների 27%-ին, աղբի հավաքման՝ 28%-ին, կրթական ծառայությունների մատուցման՝ 40%-ին, հասարակական տրանսպորտի՝ 49%-ին:

**Աղյուսակ 12.6. Հայաստան. Ծառայությունների որակի վատացման դեպքում դիմելը համապատասխան ծառայությունների ղեկավարությանը, 2008 և 2011թթ.**

*(տոկոսներով)*

Վճարովի ծառայությունների անվանումը	Գրանցվել է մատուցվող ծառայության որակի վատացում		Չեն դիմել ղեկավարությանը ծառայության որակի վատացման դեպքում		Դիմելու դեպքում ղեկավարությունը ձեռնարկել է որոշակի քայլեր իրավիճակը բարելավելու համար	
	2008 թ.	2011 թ.	2008 թ.	2011 թ.	2008 թ.	2011 թ.
Ջրամատակարարում	10.9	4.6	93.7	97.0	19.6	25.3
Ջրահեռացում	3.6	1.2	97.2	98.2	52.8	63.6
Աղբի հավաքում	8.6	1.8	96.6	98.2	30.8	27.8
Հեռախոս	4.1	0.6	93.3	96.2	75.8	95.4
Էլեկտրաէներգիայի մատակարարում	0.8	0.7	94.8	96.8	91.1	93.0
Փոստ	0.6	0.3	99.5	99.4	84.7	87.0
Բանկերի աշխատանք	0.9	0.5	99.3	99.5	84.6	81.5
Ոռոգում	2.2	0.7	97.2	99.3	30.2	55.1
Առողջապահություն	7.7	12.0	98.3	98.7	30.3	26.9
Կրթություն	6.3	9.7	99.3	99.5	34.2	39.7
Հասարակական տրանսպորտ	4.5	4.3	99.2	99.3	51.9	48.5

Աղբյուրը. 2008 և 2011թթ. ՏՏԿԱՀ